# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
## ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

0095, Ք.Երևան, Մ.Բաղրամյան պող., 19

Հայաստանի Հանրապետության

Ազգային Ժողովի նախագահ

Արարատ Միրզոյանին

Հարգարժան պարոն Միրզոյան,

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 109-րդ հոդվածի և «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 65-րդ և 67-րդ հոդվածների պահանջները՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացնում եմ «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

Ազգային ժողովի աշխատակարգի 25-րդ կետի համաձայն՝ գրությանը կցվում են

ա) նախագիծը (հիմնական զեկուցող՝ Հերիքնազ Տիգրանյան),
բ) նախագծի ընդունման հիմնավորումը,
գ) գործող օրենքի փոփոխվող հոդվածի մասին տեղեկանքը:

Խնդրում եմ օրինագիծը սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

Հարգանքով՝ Հերիքնազ Տիգրանյան

15-ը ապրիլի 2021

*Նախագիծ*

ՀՀ ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԵՎ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված** 1. «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» 2001 թվականի հունիսի 24-ի ՀՕ-200 օրենքի 4.1-ին **հոդվածում** «Մայիսի 1-ը շաբաթ» բառերը փոխարինել «Սույն օրենքով սահմանված տոնական կամ հիշատակի» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հապարակմանը հաջորդող օրվանից:

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԵՎ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

1. Առկա իրավիճակը իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

«ՀՀ տոների և հիշատակի օրերի մասին» ՀՀ օրենքում (այսուհետ՝ Օրենք) 2019 թվականի ապրիլի 9-ին կատարվել է լրացում, որով ապրիլի վերջին շաբաթ օրը սահմանվել է ՀՀ քաղաքացու օր, որպես վերահաստատումն այն փաստի, որ իշխանությունը պատկանում է ժողովրդին և ՀՀ քաղաքացու ձայնը լսելի է ժողովրդական և իրավական պետության կայացման գործում:

Առաջին անգամ այդ օրը նշվել 2019 թվականի ապրիլի 27-ին: Քանի որ այն ֆիքսված օր չէ, այլ շարժական է, գործնականում լինում են համընկնումներ Օրենքով սահմանված այլ տոնական կամ հիշատակի օրերի հետ: Դրանից խուսափելու համար Օրենքի 4.1-ին հոդվածով միաժամանակ սահմանվեց, որ մայիսի մեկը շաբաթ օրվա հետ համընկնելու դեպքում Հայաստանի Հանրապետության քաղաքացու օրը նշվում է ապրիլի վերջին կիրակի օրը:

2. Կարգավորման նպատակները, ակնկալվող արդյունքը.

Առաջարկվող կարգավորումը հնարավորություն կընձեռնի Օրենքով սահմանված այլ տոնական կամ հիշատակի օրերի հետ համընկնելու դեպքում ՀՀ քաղաքացու օրը նշել դրան հաջորդող կիրակ օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ
Օրենքի փոփոխվող նորմի վերաբերյալ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԵՎ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 4.1. Հայաստանի Հանրապետության քաղաքացու օր՝ նշվում է ապրիլի վերջին շաբաթ օրը: ~~Մայիսի 1-ը շաբաթ~~ Սույն օրենքով սահմանված տոնական կամ հիշատակի օրվա հետ համընկնելու դեպքում Հայաստանի Հանրապետության քաղաքացու օրը նշվում է ապրիլի վերջին կիրակի օրը:

*(4.1-ին հոդվածը լրաց. 09.04.19 ՀՕ-14-Ն)*